ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>>

ք.Երևան «21» փետրվարի 2018 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ձևավորում» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս. Մեսրոպյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թվով երկու բակային տարածքների վերանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **2018թ մայիսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **24100000.0 (քսանչորս միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 4016667.0 (չորս միլիոն տասնվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իր**ականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի

«Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..16 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Ձևավորում» ՓԲԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, Լենինգրադյան 16
Կենտրոնական գանձապետարան	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900012213709	Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01807916
Գ. Զթրյան----------	Ս. Մեսրոպյան ----------
Կ. S	Կ. S

Հավելված թիվ 1
<< 21> փետրվարի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 45, 45ա բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	27-36	Եզրաքարերի քանդում բետոնահիմքով	գմ	130.000	0.620	80.600
2	E27-33	Ասֆալտաբետոնե ծածկույթի քանդում / (55մ2)	$մ^3$	2.200	2.729	6.004
3	E27-31	Խճի շերտի քանդում	$մ^3$	2.750	0.348	0.957
4	E46-99	Բետոնե հատակի քանդում 67մ2	$մ^3$	2.176	11.284	24.548
5	P9-26	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	գմ	53.000	0.331	17.543
6	13-263	Մետաղական մակերևույթների մաքրում մետաղական խոզանակով	$մ^2$	80.000	0.832	66.560
7	C310-13 տ.մ.կ29	Շին աղբի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	25.495	2.359	60.143
		Բարեկարգման աշխատանքներ				
8	27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով 15x300մմ	գմ	100.000	4.215	421.500
9	27-79	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով	գմ	25.000	3.787	94.675
10	E27-19 կիրառ	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	$մ^3$	5.000	8.518	42.590
11	27-175	Բետոնե զեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	$մ^2$	100.000	3.794	379.400
12	E1-1592	Բուսահողի բարձում ա/ինքնաթափերի վրա	$մ^3$	72.500	1.621	117.523

13	C310-35	Բուսահողի տեղափոխում 35 կմ-ից	տն	87.000	3.990	347.130
14	E48-168	Բուսահողի փռում ձեռքով	$մ^2$	290.000	0.258	74.820
15	E27-173 E27-174	Խճի շերտի պատրաստում 5սմ հաստությամբ	$մ^2$	70.000	0.590	41.300
16	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում 4սմ հաստությամբ	$մ^2$	70.000	2.895	202.650
17	Շուկա	Նստարանների տեղադրում ամրացումով	հատ	3.000	30.777	92.331
18	Շուկա	Աբդամանների տեղադրում ամրացումով	հատ	3.000	15.389	46.167
19	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	6.500	2.890	18.785
20	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	3.071	0.649	1.993
21	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	3.429	2.359	8.089
22	11-6	Խճի շերտի պատրաստում	$մ^3$	1.600	8.921	14.275
23	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	1.829	36.698	67.113
24	E7-735	40x2մմ, 20x20x2մմ մետաղական խողովակներից բազրիքների տեղադրում	գմ	160.000	1.693	270.880
25	Շուկա	20x20x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	1028.570	0.345	354.857
26	Շուկա	40x2մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	125.700	0.648	81.454
27	Շուկա	Դեկորատիվ գլխադիր D=150	հատ	160.000	1.026	164.160
28	33-82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	1.500	22.645	33.968
29	15-675 գնահաշվարկ	Ավտոտնակների դեկորատիվ նկարազարդում	$մ^2$	60.000	4.300	258.000
30	E1-965	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	2.400	2.890	6.936
31	E1-968	Բնահողի ետլիցք ձեռքով	$մ^3$	0.600	0.649	0.389
32	C310-13 տ.մ.կ29	Ավելնորդ բնահողի բարձում ա/ինքնաթափերի վրա և տեղափոխում 13կմ	տն	3.330	2.359	7.855
33	E6-2	Կետային հիմքերի պատրաստում պատրաստում B-15 դասի բետոնից	$մ^3$	1.800	36.698	66.056
34	E6-82	133x4մմ մետաղական խողովակի տեղադրում բետոնի մեջ	տն	0.061	64.489	3.941
35	Շուկա	133x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	4.800	3.890	18.672
36	33-621	Մետաղական խողովակներից հենասյուների տեղադրում	հատ	6.000	9.943	59.658

37	Շուկա	102x4մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	40.800	2.941	119.993
38	Շուկա	32x3մմ մետաղական խողովակի արժեքը	գմ	6.000	0.675	4.050
39	33-82	Մետաղական մակերևույթների 2 շերտ յուղաներկում	տն	2.445	22.645	55.358
40	8-594-1	Լուսատու լուսադիոդային 1x85վտ	հատ	6.000	19.073	114.438
41	8-150-1	ԱԲԲԳ 4x16մմ2 մալուխի անցկացում օդով ճոպանով	գմ	123.000	0.888	109.224
42	8-148-1	ԱԲԲԳ 2x2.5մմ2 մալուխի անցկացում	գմ	22.000	0.170	3.740
43	11-840-1	D32 պոլիվինիքլորիդե խողովակի անցկացում	գմ	145.000	0.511	74.095
44	Շուկա	Ճոպանի արժեքը	գմ	123.000	0.199	24.477
45	8-52-1	Մեկուսիչ ՏՖ-20	հատ	6.000	0.427	2.562
46	8-52-1	Մեկուսիչ 'Ընկույզ'	հատ	6.000	0.598	3.588
47	15-614	Ցանցով պարփակված ավտոտնակի և տաղավարի մետաղական մասերի 2շերտ ներկում	$մ^2$	35.000	0.796	27.860
48	E27-19 կիրառ	5սմ հաստությամբ ց/ավազե չոր խառնուրդի պատրաստում բետոնե սալիկների տակ	$մ^3$	0.800	8.518	6.814
49	27-175	Տաղավարի բետոնե գեղարվեստական սալիկներից հատակի պատրաստում	$մ^2$	16.000	3.794	60.704
50	Շուկա	Մետաղական նստարան փայտե նստատեղերով /զրուցատաղավար/	հատ	2.000	30.777	61.554
51	Շուկա	Մետաղական սեղան /զրուցատաղավար/	հատ	1.000	21.962	21.962
52	27-79	80x200մմ կտրվածքի բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքով /տաղավար/	գմ	1.600	3.787	6.059
		Ընդամենը /հազ. դր./				4250.000
		ԱԱՀ 20 %				850.000
		Ընդամենը /հազ. դր./				5100.000

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սայաթ-Նովա 3, 5, 7 և Տերյան 59 բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	1 միավորի ընդհանուր արժեքը /հազ. դր./	Ընդհանուր արժեքը
						Հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	P23-247 P23-223 P23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /1750մ^2/	տն	4.300	0.876	3.767
2	C310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	4.300	1.834	7.886
3	E27-36	Բետոնե եզրաքարերի քանդում /հիմքով/	գմ	325.680	0.653	212.669
4	P9-26կիր.	Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում	գմ	21.700	0.348	7.552
5	C310-2 տ.մ.կ 29	Առկա նստարանների ապամոնտաժում	հատ	5.000	1.130	5.650
6	C310-1 տ.մ.կ 29	Առկա զրուցարանի ապամոնտաժում	հատ	1.000	4.603	4.603
7	C310-1 տ.մ.կ 29	Առկա խաղասարքերի ապամոնտաժում	հատ	2.000	4.603	9.206
8	P9-26 կիր.	Մետաղական ճաղաշարերի ապամոնտաժում	գմ	98.800	0.348	34.382
9	E46-99	Բետոնե հարթակների քանդում	մ^3	20.360	11.700	238.212
10	E46-106	Մետաղական սալերից հատակների ծածկույթի քանդում	մ^2	8.800	1.054	9.275
11	E46-109 կիր.	Բազալտե խճանկարե ծածկույթի քանդում լողավազանի հատակից	մ^2	119.900	0.321	38.488
12	E15-70 K=0.5	Բազալտե թասակի քանդում լողավազանի պատերից	մ^2	6.500	8.025	52.163
13	E46-132կիր.	Բազալտե սալերի քանդում լողավազանի պատերից	մ^2	92.800	3.014	279.699
14	C310-1 տ.մ.կ 29	Բասկետբոլի վահանակների ապամոնտաժում լողավազանի տարածքից	հատ	2.000	4.603	9.206
15	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով /նոր տեղադրվող 300x150մմ չափերով բետոնե եզրաքարերի երկայնքով՝ 400մմ լայնությամբ/	մ^3	1.300	2.824	3.671
16	E46-99	Բետոնե թասակների քանդում առկա հենապատից /բարձրացման համար/	մ^3	1.500	11.700	17.550
17	P9-26 կիր.	Մետաղական խողովակների ապամոնտաժում	գմ	45.000	0.348	15.660
18	E48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	40.000	0.045	1.800
19	E1-961	III կարգի բնահողի կտրում ձեռքով /խաղահրապարակներում, անցուղիներում, հենապատի համար/	մ^3	63.400	1.633	103.532
20	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	121.400	2.428	294.759

		Կառուցողական աշխատանքներ				
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ3	2.950	6.087	17.957
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	168.680	4.293	724.143
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ3	2.554	6.087	15.546
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	283.800	3.120	885.456
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ3	17.035	6.078	103.539
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր g/a շաղախով	մ3	13.628	11.795	160.742
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ2	340.700	3.755	1279.329
		Բետոնե հենապատի բարձրացում				
1	E46-51	Անցքերի բացում գոյություն ունեցող բետոնե հենապատում, Φ12մմ	հատ	39.000	0.261	10.179
2	E6-86	Φ10A500c ամրանների տեղադրում, L=300մմ	տ	0.005	292.043	1.460
3	շուկա	Շաղափած անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	կգ	2.300	2.295	5.279
4	E6-90	Բետոնացում B15 դասի բետոնով	մ3	4.020	33.869	136.153
5	E6-13 կիր.	Բետոնե բասակի իրականացում B15 դասի բետոնով, 7սմ հաստ.	մ3	1.700	35.859	60.960
6	E15-201	Հենապատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ /գոյություն ունեցողի տեսքով/	մ2	29.700	1.214	36.056
		Նոր բետոնե հենապատի կառուցում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ3	0.483	6.087	2.940
2	E6-93	Հենապատի ե/բ հիմքի կառուցում B15 դասի բետոնից	մ3	1.725	40.911	70.571
3	շուկա	Ամրան Φ14A500c	տ	0.055	271.576	14.937
4	շուկա	Ամրան Φ6AcI	տ	0.020	280.959	5.619
5	E6-90	Բետոնե հենապատի կառուցում B15 դասի բետոնով	մ3	2.070	33.869	70.109
6	E15-201	Հենապատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ /գոյություն ունեցողի տեսքով/	մ2	10.400	1.214	12.626
		Հենապատի վերանորոգում /Հատված «Ա»/				

1	E46-99	Բետոնե թասակների քանդում առկա հենապատից /բարձրացման համար/	մ3	0.370	11.700	4.329
2	C310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	0.740	2.428	1.797
3	E6-90	Հենապատի բարձրացում 20սմ B15 դասի բետոնով	մ3	1.010	33.869	34.208
4	E6-13 կիր.	Բետոնե թասակի իրականացում B15 դասի բետոնով, 7սմ հաստ.	մ3	0.400	35.859	14.344
5	E15-201	Հենապատերի սվաղի իրականացում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ2	17.700	1.214	21.488
		<u>Աստիճանների կառուցում, երեսպատում բազալտե սալերով</u>				
1	E6-90	Բետոնե աստիճանների կառուցում B15 դասի բետոնով	մ3	0.180	33.869	6.096
2	E15-77	Առկա և նոր կառուցվող աստիճանների, թեքահարթակների երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ.	մ2	4.900	10.772	52.783
3	E15-10	Աստիճանների կողապատերի երեսպատում բազալտե սալերով 30մմ հաստ.	մ2	0.300	18.454	5.536
		<u>Լողավազանի վերանորոգում</u>				
1	E11-55 E11-56 q=2	Լողավազանի հատակի սվաղում ց/ավազային շաղախով h=3սմ	մ2	119.900	2.323	278.528
2	E8-27	Ջրամեկուսացում բիտումի տաք կրկնակի քսուկով	մ2	119.900	0.594	71.221
3	E11-55 E11-56 q=2	Հատակի սվաղում ց/ավազային շաղախով h=3սմ	մ2	119.900	2.323	278.528
4	E11-135	Լողավազանի հատակի երեսպատում մանրահատիկ կերամիկական սալիկներով	մ2	119.900	5.523	662.208
5	E15-201	Լողավազանի պատերի սվաղում ց/ավազային շաղախով	մ2	83.800	1.079	90.420
6	E8-27	Ջրամեկուսացում բիտումի տաք կրկնակի քսուկով	մ2	83.800	0.594	49.777
7	E11-55 E11-56 q=2	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով h=3սմ	մ2	83.800	2.323	194.667
8	E15-82	Լողավազանի պատերի երեսպատում մանրահատիկ կերամիկական սալիկներով	մ2	83.800	5.867	491.655
9	E15-10	Շատրվանի ավազանի դրսի պատերը երեսպատել բազալտե սալիկներով b=3 սմ	մ2	17.500	18.454	322.945
10	E15-70	Բազալտե գլխադիրի տեղադրում h=50մմ	մ2	37.500	28.725	1077.188
11	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.000	2.220	2.220
12	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Φ32x2.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	24.000	0.920	22.080
		<u>Ջրահեռացման հորի կառուցում ՋՀ-1</u>				
		<u>Տեխնոլոգիական աշխատանքներ</u>				
1	E22-370	Սեպավոր փական DN150մմ, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1.000	122.986	122.986
2	E22-385 q=0.5	Կցաշուրթային ճկուն ներդիր DN150մմ, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1.000	13.901	13.901

3	E22-433	Պողպատե կցաշուրթ DN150մմ P=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	2.000	1.732	3.464
4	E15-614	Պողպատե խողովակների և ձևավոր մասերի երկշերտ յուղաներկում	մ2	0.300	0.828	0.248
5	E22-365	Պոլիէթիլենե (PE) ձևավոր մասեր de160	հատ	1.000	3.852	3.852
6	E6-30	Բետոնե հենարանի կառուցում B12,5 դասի բետոնով	մ3	0.004	34.293	0.137
7	E6-82	Ե/բ հորի պատերում DN325x4 St պողպատե պատյան խողովակի տեղադրում	կգ	12.700	0.501	6.363
		<u>Հողային աշխատանքներ</u>				
1	E1-991	Փոսորակի մշակում V կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով	մ3	5.000	12.619	63.095
2	E1-1638 E1-1185	Փոսորակի ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ3	3.700	0.230	0.851
3	E1-969	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ3	1.300	0.831	1.080
		<u>Ե/բ հոր D=1,0մ, H=1,8մ</u>				
1	E6-1	Բետոնե նախապատրաստական շերտի կառուցում B7,5 դասի բետոնով	մ3	0.260	23.255	6.046
2	E22-446	Ջրամատակարարման ե/բետոնե կլոր հորի պատրաստում հավաքովի էլեմենտներից D=1,0մ, Hբ=1,8մ, (բետոն-1,15մ3,ամրան 138,6կգ-1հորի համար) թուջե կափարիչի և աստիճանի մոնտաժումով	մ3	1.150	97.187	111.765
3	E11-11	Ցեմենտ ավազային շաղախի իրականացում M100 մակնիշի	մ3	0.020	25.375	0.508
4	Ինֆոր	Մետաղական աստիճանի արժեքը	կգ	21.300	0.433	9.223
5	Ինֆոր	Թուջե կափարիչի T տիպի արժեքը	հատ	1.000	38.977	38.977
6	E15-614	Մետաղական տարրերի երկշերտ յուղաներկում	մ2	1.000	0.813	0.813
		<u>Ոռոգման իրականացման համար պոմպի տեղադրման աշխատանքներ</u>				
1	E1-961	III կարգի բնահողի կտրում ձեռքով	մ3	24.000	1.633	39.192
2	E6-1	Նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ3	0.590	23.255	13.720
3	E6-22	Ե/բ միաձույլ հորի պատրաստում B15 դասի բետոնից	մ3	8.320	34.697	288.679
4	շուկա	Ամրան Φ8A500c	տ	0.866	280.959	243.310
5	շուկա	Ամրան Φ6Acl	տ	0.033	280.959	9.272
6	շուկա	Պոլիէթիլենե բաքի տեղադրում 1500լ տարողությամբ	հատ	1.000	60.631	60.631
7	շուկա	Պոմպ P=1.5կվտ, H=12մ	հատ	1.000	150.206	150.206
8	E22-117	Խողովակաշարի անցկացում պոլի՝թիլենային խողովակներից Φ25մմ	գմ	64.000	0.365	23.360
9	E22-117	Խողովակաշարի անցկացում պոլի՝թիլենային խողովակներից Φ32մմ	գմ	71.000	0.461	32.731

10	E7-768	Մետաղական երկփեղկ դռնակի կողնստուկցիաների և ներդիր տարրերի հավաքակցում	տ	0.240	13.200	3.168
11	շուկա	Անկյունակ 50x50x5մմ	գմ	15.000	1.300	19.500
12	շուկա	Պողպ. թիթեղ	տ	0.180	333.229	59.981
13	շուկա	Պողպ. ժապավեն 50x4մմ	գմ	14.000	0.533	7.462
14	շուկա	Ծխնի, 4հատ	կգ	2.600	0.296	0.770
15	շուկա	Կողպեք	հատ	1.000	3.898	3.898
16	E33-82	Դռնակի յուղաներկում	տ	0.240	11.559	2.774
17	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	36.000	2.428	87.408
		<u>Այլ աշխատանքներ</u>				
1	Գնահաշվարկ N9	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	185.700	5.876	1091.173
2	Գնահաշվարկ N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	11.000	8.069	88.759
3	Գնահաշվարկ N2	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	12.000	28.286	339.432
4	Գնահաշվարկ N14	Նոր մետաղական սեղանով զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.000	539.190	539.190
5	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ3	9.280	1.961	18.198
6	Գնահաշվարկ N1	Նոր մանկական խաղասարք «պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	2.000	153.708	307.416
7	Գնահաշվարկ N4	Նոր մանկական խաղասարք «ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.000	54.281	54.281
8	E27-42 E27-42-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստ.	մ3	2.350	0.541	1.271
9	E-27-171	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստ. /300x150մմ չափերով եզրաքարերի երկայնքով՝ 0.4մ լայնությամբ/	մ2	47.000	2.203	103.541
10	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ2	361.900	0.593	214.607
11	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ2	361.900	2.955	1069.415
12	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ3	41.120	0.346	14.228
13	E15-77	Ցայտաղբյուրի հարթակի երեսպատում բազալտե սալիներով 30մմ հաստ.	մ2	4.100	10.772	44.165
14	C310տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	61.680	4.871	300.443
15	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ	մ2	411.200	1.300	534.560
16	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ2	411.200	0.134	55.101
17	E48-214	Սերմի ցանում 1մ^2 - 35գր	մ2	411.200	0.188	77.306

1	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով	մ3	0.290	2.824	0.819
2	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ3	34.580	2.880	99.590
3	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	101.700	0.180	18.306
4	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 3.56+3.56մ^3 /	մ3	7.120	1.530	10.894
5	8-417-7	Խողովակ վինիպլաստե Ø50մմ	գմ	101.700	0.416	42.307
6	E8-145-1	ԱԲԲԳ 4x16մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	101.700	0.614	62.444
7	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	101.700	0.191	19.425
8	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ3	26.442	0.834	22.053
9	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ2	0.245	0.591	0.145
10	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ2	3.500	2.921	10.224
11	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	12.800	2.428	31.078
12	Գնահաշվարկ N8	Լուսավորության հենասյուների տեղադրում H=6.1մ	հատ	5.000	107.540	537.700
13	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ, կամ համարժեք	հատ	5.000	10.109	50.545
		Ընդամենը /հազ. դր./				15833.333
		ԱԱՀ 20%				3166.667
		Ընդամենը /հազ. դր./				19000.000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012213709
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Ձևավորում» ՓԲԸ
Ք. Երևան, Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան ----------
(ստորագրություն)
Կ. Տ

Հավելված թիվ 2
<< 21> փետրվարի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>>** *գնման պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

«Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թվով երկու բակային տարածքների վերանորոգման »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	***Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 45, 45ա բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ***	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.05.2018թ
2	***Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սայաթ-Նովա 3, 5, 7 և Տերյան 59 բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ***	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.05.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012213709
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն

Կ. Տ.

Կապալառու
«Ձևավորում» ՓԲԸ
Ք. Երևան, Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան ----------
(ստորագրություն)

Կ. Տ

Հավելված 3
<< 21> փետրվարի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>>** *գնման պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	45000000	***Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 45, 45ա բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ***	-----	1 020 000	1 020 000	2 295 000	2 295 000	2 295 000	4 080 000	4 080 000	4 080 000	5 100 000	5 100 000	5 100 000	5 100 000
	45000000	***Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սայաթ-Նովա 3, 5, 7 և Տերյան 59 բակային տարածքի վերանորոգման աշխատանքներ***	-----	3 800 000	3 800 000	8 550 000	8 550 000	8 550 000	15 200 000	15 200 000	15 200 000	19 000 000	19 000 000	19 000 000	19 000 000

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900012213709
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Ձևավորում» ՓԲԸ
Ք. Երևան, Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510036589790100
ՀՎՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 21> փետրվարի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>>** *գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 21> փետրվարի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ **<<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1>>** *գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1»*
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«21»փետրվարի 2018թ**

«Ձևավորում» ՓԲԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Սարգիս Մեսրոպյանի նույն. Քարտ 002590560 տրված 08.05.2015թ 008-ի կողմից, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Երևանի քաղաքապետարան * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՈԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու
«Ձևավորում» ՓԲԸ
Ք. Երևան, Լենինգրադյան 16
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510036589790100
ՀԿՀՀ 01807916

Ս. Մեսրոպյան _____
(ստորագրություն)

Կ. Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N**

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Ձևավորում» ՓԲԸ

4. Վճարողի բանկը՝ «Արարատբանկ» ԲԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 1510036589790100

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01807916

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12. Գումարը թվերով և բառերով՝ **2410000/երկու միլիոն չորս հարյուր տաս հազար/**

13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD

14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի կատարման ապահովում

15. Պայմանագրի ծածկագիրը՝ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/25-1

16. Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Ս. Մեսրոպյան /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*